ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/9870/02/25 ք. Երևան
«30» սեպտեմբերի 2025թ.

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ Երևանի քաղաքապետի՝ «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 21.08.2025թ.-ին կայացված թիվ 3340-Ա որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

18.09.2025 թվականին էլեկտրոնային դատավարություն համակարգի միջոցով Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, մակագրվել է

դատավոր Ա. Ծիլաջյանին:

Դատավոր Ա. Ծիլաջյանի 2025 թվականի սեպտեմբերի 22-ից անաշխատունակության մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ ներկայացված զեկուցագրի հիման վրա թիվ ԵԴ2/9870/02/25 քաղաքացիական գործը վերաբաշխվել և 25.09.2025 թվականին մակագրվել է Մ. Հարությունյանին:

(I) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ և 122-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը, ինչպիսի պայմաններում հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

(II) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ՀՀ Երևանի քաղաքապետարանից պահանջել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/258» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

(III) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով, քանի որ կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտությունը տվյալ փուլում բացակայում է:

(IV) Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարան ՀՄ-ի՝ Երևանի քաղաքապետի՝ «ԲԵՍՏԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 21.08.2025թ.-ին կայացված թիվ 3340-Ա որոշումը անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2025 թվականի հոկտեմբերի 30-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. ՀՀ Երևանի քաղաքապետարանից պահանջել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/258» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում:**

4. Որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

5. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Մալվինա Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am